

մարօրէն եւ արդիւնաւոր կերպով: Սակայն
ամէն ինչ աւելի յստակօրէն պիտի ըմբռնեն
մեր յարգելի եղբարց, Հաւատոյ Տարածման
Սրբազան Ժողովոյն Ս. Հ. Ե. Կարգինաւ-
ներու, նամակէն: Մենք կը խնդրենք Ամենա-
կարող Աստուծմէ, որ օգնական եւ բարեա-
ցակամ ըլլայ քու Եղբայրութեանդ եւ հա-
մայն Հայոց Ազգին. եւ մենք կը շնորհենք
Առաքելական Օրհնութիւնը, որ կը բխի մեր
հայրական սիրազեղ սրտէն:

Տրուած ի Ս. Մարիամ Աւագ Եկեղեցին,
Հոռոմ, Ձկնօրսի կնիքով, 5 Օգոստոս 1662ին,
Մ եր Քահանայապետութեան ութերորդ
տարին» (10):

Տակաւին չէ հրատարակուած Հաւատոյ
Տարածման կարգինաւներու նամակը, որուն
կ'ակնարկէ աստ Աղեքսանդր Է. Ս. Պապը:
Բայց Ծայրագոյն Քահանայապետին այս
նամակէն ի յայտ կու գայ, թէ Հոռոմի մէջ
զնահատուած է Յակոբ Կաթողիկոսին նա-
մակը, յորում Հայոց Հայրապետը «կը
յայտնէ պարտ ու պատշաճ հնազանդութիւ-
նըն ու հպատակութիւնը հռոմէական եկե-
ղեցոյ եւ կը յարգէ Առաքելապետը յան-
ձին» Ս. Քահանայապետին, ինչպէս կը
յայտարարէ նոյն ինքն Աղեքսանդր Է., որ
զենք կը յորդորէ իր Ժողովուրդին հետ ա-
ւելի սերտիւ միանալու Ս. Աթոռին:

(10) A Chronicle of the Carmelites in Per-
sia and the Papal Mission of the XVII and XVIII
Centuries, Vol. II, pp. 1332-1333.